

ՄԻՒԹԱՐ ԳՈՇԸ ՕՐԵՆՍԳԵՏ ԵՎ ՕՐԵՆՍԴԻՐ

Գ. Յ. Սաֆարյան,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավումքի
իմստիտուտի առաջատար գիտաշխատող,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Միջնադարյան Հայաստանի իրավաքաղաքական միտքը իր գագաթնակետին է հասել օրենսդիր և օրինագետ, առակագիր և նանկավարժ, Եկեղեցական և հասարակական գործիչ Միհրար Գոշի ստեղծագործություններում: Նրա կազմած «Հայոց Դատաստանագիրը»¹ ոչ միայն մեզ հայտնի հայոց ազգային առաջին «Հավատք օրինացն» է, այլև, «քանկագին գանձ» միջնադարյան հայ մատենագրության մեջ: Հիրավի, միջնադարյան հայ մատենագրության մեջ չկա Գոշի «Դատաստանագիրը» համարժեք մեկ այլ իրավական հուշարձան, որ բազմակողմանիորեն կարգավորում է իր ժամանակաշրջանի Հայաստանի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական հարաբերությունները: Միայն այս հանգանքը Գոշի «Դատաստանագիրը» դարձել է դարակազմիկ կոթողային հուշարձան: Եթե սրան ավելացնենք այն, որ մեծ մտածողը սահմանել և օրենքի աստիճանի է բարձրացրել այնպիսի իրավաքաղաքական գաղափարներ, որոնք կենսական ու առաջադիմական են ենել ոչ միայն խնդրո դարաշրջանի, այլև հետագա ժամանակաշրջանի համար, ապա «Դատաստանագիրը» իր գիտաճանաչողական նշանակությամբ դուրս է գալիս հայ իրականության սահմաններից և ծեղզ բերում համանարդկային արժեք:

Միհրար Գոշը ծագումով Հայաստանի Գանձակ քաղաքից էր, «քրիստոնեայ ծնողաց գաւակ»: Ենթադրում են, որ նա ծնված պիտի լինի 1130 թվականին: Գոշը վախճանվել է 1213թ. զառամյալ տարիքում: Նա ստացել է փայլուն կրթություն և արժանացել «Վարդապետ»² պատվավոր կոչմանը:

¹ Տես. Միհրարայ Գոշի Դատաստանագիրը հայոց, Վահան Բաստամյանցի հետազոտությամբ և ծանոթագրություններով. Վաղարշապատ, 1880: այսուհետ՝ տեսատում հոդվածը և համարը:

² Վարդապետ՝ գիտնական-հոգևորական, աստվածաբանության դոկտոր կամ գիտության դոկտոր ժամանակակից իմաստով: Մեծ է վարդապետների դերը նաև հայ իրավունքի և իրավագիտության զարգացման գործում: Այս իմաստով վարդապետների կատարած աշխատանքը, ըստ եռթյան, նման է հոգմեացի իրավաբանների գործունեությանը:

Գոշը «Ղատաստանագիրքը» գրել է 1184 թվականին: Այն բաղկացած է երեք մասից՝ «Նախադրություն», «Եկեղեցական կանոններ» և «Աշխարհական օրենքներ»: Ղատաստանագրքի «Նախադրությունը» մի իրավագիտական աշխատություն է՝ ղատաստանագրքի ստեղծման պատճառների, իրավունքի հասկացության, դատարանի, դատարանակազմության և ղատավարության հարցերի վերաբերյալ:

Ստեղծելով «Դայոց ղատաստանագիրքը», Մխիթար Գոշը դառնում է ազգային ինքնազիտակցության դրոշակակիր, ազգային անկախ պետականությունը վերականգնող Զաքարյան իշխանների գաղափարական խորհրդատուն: Գոշը եկավ լրեցնելու նաև այն չարախոսներին, ովքեր հայերին մեղադրում էին օրենսդրություն, արդարադատություն չունենալու մեջ: Ինքը՝ Մխիթար Գոշը, «Նախադրության» Բ գլխում ղատաստանագիրք գրելու անհրաժեշտությունը բացատրում է տասներկու պատճառով.

Առաջին մեջ՝ հայերիս, բազում անգամ պարսավել են թե այլադապանները և թե քրիստոնյաները, որ մենք գրավոր ղատաստանատառապահիրը չունենք:

Երրորդ. չարությունը մարդկանց մեջ, չարն ընդհանրապես գորացել է, և նա հանգցրել է «զբնաւորականն ի մեզ աւրէսն» կամ «զգիտության, որ ի բնութենու ունեածը»: Ղատաստանագիրքը պետք է նպաստի վերականգնելու ընական օրենքի զգացողությունը, կատարելությունը և ատելությունը միմյանց նկատմամբ փոխարինի վշտակցությամբ ու սիրով:

Երրորդ. Ծովության պատճառով մարդիկ չեն վարժվում օրենսգիտության մեջ, անգիտակ են օրենքներին, հետևապես նրանց որոշումները էլ ծիշտ չեն կամ շեղվում են օրենքից, ուստի «կամեցաք գրով ղատաստանիս զնոսա իրեւ քնոյ զարթուցանել»:

Չորրորդ. Մովսիսական օրենքը, մարգարեների խոսքը և Ավետարանը մեկ անգամ արդեն տրված լինելով, այդպես էլ մնացել են անշարժ, քարացած, մինչդեռ մարդկանց վարքն ու բարքը տարբեր է և փոփոխվում է ըստ ժամանակի և ըստ երկրի: Նշված օրենքները այդ հանգամանքը հաշվի չեն առել: Հետևաբար, այնպիսի ղատաստանագիրք է պետք, որ արտահայտի այդ փոփոխությունները:

Չինգերորդ. առաջ սուրբ հոգին, ասել է թե քրիստոնեական կրոնը, ներգործում էր և նպաստում ծննարիտ ղատաստան կատարելուն, կրոնը հենց օրենքն էր՝ գրված մարդկանց սրտի մեջ, ուստի, գրավոր օրենքի կարիքը չկար: Այժմ սուրբ հոգին այլև այն ազդեցությունը չունի մարդկանց վրա, «Վրիպել ենք» քրիստոնեական եղբայրակիրությունից, ուղղամտությունից և դրանց պատճառով անհրաժեշտ հանարեցինք գրել ղատաստանագիրքը:

Վեցերորդ, դատական գործերը վճռվում են նաև երդմամբ, բայց աճել է չարությունը նարդկանց մեջ, և նրանք, չնայած որ երդումն արգելել է Աստված, տեղի ու անտեղի երդվում են և հաճախ սուստ: Խախտված այս կարգը կանոնավորելու նպատակով է նաև, որ գըրվում է դատաստանագիրը:

Յոթերորդ, դատաստանագիրը գրվում է, որպեսզի հայերը այն չունենալու պատճառով չդիմեն այլազգիների, ասել է թե՝ մահմեդական դատարաններին:

Ուշագրավ են նաև նյուս պատճառները, սակայն վերոնշվածը աներկայորեն վկայում է, թե Գոշը որքան խորն է զգացել Դատաստանագրքի անհրաժեշտությունը՝ հասարակության գործնական պահանջները բավարարելու համար: Այնուհանդերձ, Դատաստանագրքի գլխավոր խնդիրն էր բավարարել դարի հրամայականն ու պահանջը՝ ազգային գաղափարախոսությանը սատար կանգնել ժողովրդի ազատագրական պայքարին և իրավական հող նախապատրաստել պետականության վերականգնման համար:

Այնուհետև, դատելով իրավունքի մասին, Գոշը տարրերում է իրավունքի օարգացման հետևյալ փուլերը, ա) բնական իրավունք, բ) աստվածային իրավունք, գ) սովորութական իրավունք, դ) կանոնական իրավունք և ե) աշխարհիկ կամ դրական իրավունք: Միսիքար Գոշը Դատաստանագրքի առաջին և վստահելի աղբյուրը համարում է բնական (բնավորական) իրավունքը, որը գոյություն է ունեցել նահապետ Արքահամի և հեթանոսների ժամանակ (գլուխ Ա): Մեկ այլ տեղ էլ նշում է, որ բնական (բնավորական) է, որ ամենքը լավին ցանկան և անսխալ գործեն (գլուխ ԺԱ), քանզի այն բխում է մարդու բնությունից, նրա եռթյունից:

Դայտնի է, որ բնական իրավունքի գաղափարը ձևավորվել է դեռևս անտիկ դարաշրջանում՝ սովեստների, Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, Ֆիցերոնի, հռոմեացի իրավաբանների կողմից:¹ Այդ տեսությունը իր հետագա օարգացումը ստացավ միջնադարում՝ Ավգուստինի, Թոնաս Աքվինացու երկերում, բյուզանդական օրենքներում, նոր ժամանակներում՝ Ջյուգո Ջրոցիոսի, Ջորժի, Լոկի, Սպինոզայի, Սոնտեսյոյի, Ռուսոյի, Կանտի, Ֆիխտեի, Ջեգելի, Մեղիսոնի, Զեֆերսոնի և այլոց կողմից:² Դայտնի է նաև, որ իհն և միջին դարերում բնական իրավունքի կողմնակիցները այդ իրավունքը տարածում էին նաև ողջ կենտրոնական աշխարհի վրա: Այսպես,

¹Տես՝ История политических и правовых учений. Под общей редакцией академика РАН, профессора В.С. Нерсисянца. М., 2004, с. 39-77.

²Տես՝ Խոյն տեղը, էջ 109-158, 340-409:

հռոմեացի նշանավոր իրավաբան Ուլպիանոսը գտնում է, որ «բնական իրավունքը այն է, որը բնությունը սովորեցրել է ողջ կենդանական աշխարհին, քանզի այդ իրավունքը ներհատուկ է ոչ նիայն մարդկային ցեղին, այլև բոլոր կենդանիներին»: Անգլիացի խոչորագույն իրավագետ Յենրի Բրակոտոնը իր «Անգլիայի օրենքների և սովորությունների մասին» գրքում գտնում է, որ «բնական իրավունքը այնպիսի իրավունք է, որ ներհատուկ է ողջ կենդանական աշխարհին»: Ի տարբերություն իր նախորդների և ժամանակակիցների, Գոշը բնական իրավունքը տարածում էր բացառապես մարդկանց վրա և, ընդհանրապես, որպես իրավահարաբերության սուբյեկտ, նա ճանաչում է միայն մարդուն. «Յայտնի է, զի մարդկանց է սահմանած դատաստանն և ոչ իրեշտակաց և ոչ անասնաց» (գլ. Դ): Գոշի հայացքներում բնական իրավունքը ամենից առաջ ենթադրում է անձի ազատություն. «Ազատ յենթարկեն եղել մարդկայինս բնութիւն» (մասն 2-րդ, հոդվ. գ):

Այսպիսով, բնական իրավունքը, ըստ Գոշի, աստվածային բանականության արտահայտությունն է մարդու մեջ:

Աստվածային իրավունքը, ըստ Դատաստանագրքի, Աստծո կամքն է՝ միջնորդված մովսիսական օրենքներով և Վկետարանով: Մովսիսական օրենքները և Վկետարանը «լրումն են բնաւորական» իրավունքի: Սակայն աստվածային իրավունքը չի կարող բառնալ մարդու կամքի ազատության վրա «զի իշխանական կամսն ոչ բառնան»:

Կանոնական և աշխարհիկ օրենքները բխում են ինչպես «բնավորական», այնպես էլ «աստվածային» օրենքներից: Եթե բնական և աստվածային օրենքները, մարդու կամքից անկախ և անփոփոխ են, քանի որ սահմանված են աստծու կողմից, ապա կանոնական և աշխարհիկ օրենքները փոփոխական են և շարժուն՝ պայմանավորված հասարակությունում տեղի ունեցող իրադարձություններով և փոփոխություններով: Ի տարբերություն եվրոպական իրավաբանականացուատորների (մեկնիչների), Գոշը քննադատորնեն է ընդունել և յուրացրել օգտագործած բոլոր աղբյուրները, այդ թվում նաև նովսիսական օրենքները:

Միսիքար Գոշը, ըստ եռթյան, առաջ քաշելով կատարյալ և ոչ կատարյալ օրենքների հարցը, փաստորեն դրանց ընտրությունն է առաջարկում: Քաջ գիտակցելով, որ իրավունքը և օրենսդրությունը տարբեր ժամանակներում, տարբեր ազգերի և ժողովուրդների մոտ տարբեր և առանձնահատուկ են, նա գտնում է, որ յուրաքանչյուր ժողովուրդ պետք է ընտրի իր կարգերին և ժամանակին համապատասխան իրավական նորմեր. «Ընտրել գդատաստանն ըստ ժամանակի եւ ազգաց, եւ աշխարհաց» (գլ. Բ): Անգամ իր դատա-

տանագիրքը նա վերջնական և ավարտուն չի համարել և հորդորել է գալիք սերունդներին ուղղել և լրացնել այն:

Գոշի առաջադիմական և մարդասիրական հայացքները իրենց կոնկրետ արտահայտությունն են գտել Ղատաստանագրքի կոնկրետ նորմերում: Կողմնակից լինելով կառավարման միապետական ծիկն, Գոշը իրավագիտության պատմության մեջ առաջինն է սահմանուն պետական սուվերենության հասկացությունը. «Թագավորներ կոչվուն են նրանք, ովքեր իրենց ազգը տիրում են միանգամայն և ուրիշ ազգերից հարկ են վերցնում և թե ոչ, հարկ չեն տալիս ուրիշներին»: Ինչ խոսք, պետական սուվերենության նման ծևակերպման վրա իր կնիքն է դրել միջնադարյան ավատատիրական աշխարհայեցողությունը, այնուհանդերձ, այն հեռու չէ պետական սուվերենության ժամանակակից գիտական սահմանումից, քանի որ գոշյան սահմանման մեջ տեղ են գտել պետական սուվերենության երկու գլխավոր հատկանիշները, պետական իշխանության լիակատար ինքնուրույնությունը երկրի ներսում և անկախությունը արտաքին հարաբերություններում: Դիրավի, մինչև Գոշը և նրա ժամանակ, իրավական մտքի պատմության մեջ չենք հանդիպում պետության սուվերենության մասին նման սահմանման: Դայտնի է, որ սուվերենության մասին ուսմունքը Եվրոպայում ծևավորվել է 15-16-րդ դարերում, մասնավորապես, ժամ Բոդենի (1530-1596) «Վեց գիրք պետության մասին» (1576) աշխատությունում:

Թագավորին օժտելով պետական սուվերենությամբ, այդուհանդերձ, ըստ Գոշի, քագավորական իշխանությունը անսահմանափակ չէ, և այն սահմանափակված է օրենքով, քանզի օրենքով գործել պարտավոր են ամենքը, այդ բոլով և քագավորը. «Ղատաստանաւ վարեսցի յամենայն իրս և ի գործս հաւատացնալ քագաւոր» (Ղատաստանագիրք, էջ 306): Այստեղ խոսքը գնում է օրենքի գերակայության մասին: Ուժեղ միապետության գրավականներից մեկը գահաժառանգության կարգն է: Գոշը սկզբունք կանգնած է եղել գահաժառանգման մայորատի (կամ ազնատական) սկզբունքի վրա, ըստ որի՝ գահը պետք է ժառանգեն նախ քագավորի եղբայրները և միայն նրանց բացակայության դեպքում՝ նրա որդիները: Գահաժառանգման մայորատի՝ այս սկզբունքը ֆեռուալիզմի դարաշրջանում տարածված է եղել և Եվրոպայում, և Ասիայում: Գահաժառանգման այդ սկզբունքը որոշ չափով կիրառվել է Արշակունիների օրոք և տարածված էր Բագրատունյաց քագավորությունում: Դաշվի առնելով Բագրատունյաց փորձը և այն կարևոր հանգամանքը, որ կվերականգնվի հայոց պետականությունը Զաքարյանների գլխավորությամբ, Գոշը նույնպես ընդունել է գահաժառանգման մայորատի սկզբունքը: Սակայն պատմական իրադարձությունները զարգացան

Գոշի ակնկալություններին հակառակ ուղղությամբ՝ չնայած ազատագրվեցին Նայաստանի իյուսիս-արևելյան շրջանները, այդուհանդերձ կենտրոնացված միասնական թագավորական իշխանություն չստեղծվեց: Դաշվի առնելով այս, ինչպես նաև այն կարևոր հանգամանքը, որ ուժեղ պետականության երաշխիքներից մեկն էլ զահաժառանգման կայուն կարգն էր, Գոշը ի վերջո ընդունում է գահի փոխանցումը ուղիղ գծով՝ հորից որդուն «թագավորութիւն սեպուհական լիցի ի հօ-րէ... առ որդի»: Այսինքն, Գոշն առաջ է քաշում գահաժառանգության կողմանական (արենակցական), ավելի ծիշտ՝ միաժառանգության սկզբունքը: Միևնույն ժամանակ, բարձր գնահատելով երկրի ղեկավարի դերն՝ ու նշանակությունը պետական կառավարման գործում, նա սահմանում է, որ գահը անցնի ոչ թե անպայման անդրանիկ որդուն, ինչպես ընդունված էր հայ տվյութական իրավունքով, այլ որդիներից «յառաջադեմին», այսինքն նրան, ով իսկապես արժանի է այդ բարձր պաշտոնին, «զի թւպէտ զանդրանիկ ի դէմ է թագավորեցուցանել, այլ զչառաջադեմն յաթու նսատուացէ թագաւոր» (մասն 2-րդ, հոդվ. Ա):

Գոշը մեծ նշանակություն է տալիս աշխարհիկ (քաղաքացիական) և հոգևոր (Եկեղեցական) իշխանությունների փոխհարաբերությանը, քանզի միջնադարում ուժեղ պետականության, անկախության և ժողովրդի միասնության երաշխիքներից մեկն էլ հոգևոր իշխանությունն էր: Եկեղեցու դերն ու նշանակությունը հայ իրականության մեջ առավել ցայտուն դրսերվեց կորցրած պետականության պայմաններում: Ի տարբերություն հայոց պետությանը, Դայ Առաքելական Եկեղեցին ոչ միայն հանահայաստանյան էր, այլ նաև հանահայկական:

Դայ Եկեղեցին իր ծագման ժամանակից եղել և մնում է խստ կենտրոնացված կազմակերպություն: Նշված հանգամանքները հնարավորություն էին տալիս Եկեղեցուն իրականացնել ազգապահպան գործունեություն և աշխարհիկ իշխանության հետ միասին պահպանել ու ամրապնդել հայ ժողովրդի քաղաքական ինքնավարությունը: Եկեղեցին, ամրապնդելով իր իշխանությունը, 5-րդ դարից իր ծեռքում էր կենտրոնացրել նաև արդարադատության ֆունկցիան:

Այս բոլորը խորապես գիտակցել է Գոշը և Դատաստանագրքով ամրապնդել է Եկեղեցու և հոգևորականության հեղինակությունը, նրա քաղաքական և տնտեսական իիմքերը: Այսպես, Գոշը կտրականապես դեմ է աշխարհիկ իշխանությունների միջամտությանը Եկեղեցու գործերին, սակայն Եկեղեցին իրավունք ուներ, նույնիսկ պետականության պայմաններում, մասնակցել աշխարհիկ-քաղաքական հարցերի քննարկմանը: Գոշը սահմանում է, որ թագաժառանգի ընտրության հարցում Դայոց հայրապետի համաձայ-

նությունը և երաշխավորությունը պարտադիր են: Թագավորին գահ-ընկեց անելու և պատճելու համար դարձյալ պարտադիր էր հայ-րապետի համաձայնությունը: Եկեղեցու արտոնյալ և ինքնավար կազմակերպություն լինելու նասին է վկայում նաև Դատաստա-նագրի այն նորմը, ըստ որի՝ հայրապետը, երբ ցանկանա, կարող է արքունիքում թագավորի սեղանին նստել առանց հրավերի, սակայն թագավորը նման իրավունքից գուրկ է հայրապետի տանը (Մասն 1-ին, հոդվ. Բ):

Անուսանդատանեկան հարաբերությունների իրավական կար-գավորումը նույնպես խարսխված է ժամանակաշրջանի լավագույն ավանդությների և առաջադիմ գաղափարների վրա: Այսպես, Գոշը Դատաստանագրքում անրագրել է, որ անուսանդատումը պետք է լինի ամուսնացող գույքերի կամավոր համաձայնությամբ, «ոչ պսակել առանց զմիմեանս տեսանելոյ, չի անյատ է, թե բնակին, իսկ ոչ կամին ամուսնանալ իւ կամ ոչ հաւանիլ միմեանց» (Մասն 2-րդ, հոդվ. Ա): Գոշը ոչ միայն Դատաստանագրքով, այլև իր առակներով ցույց է տալիս, որ եթե անուսանդատում չի կայանում սիրո հողի վրա, ապա չի կարող լինել իհմնավոր և խկական ամուսնական միություն:

Անուսինը պարտավոր է հարգել կնոջ պատիվն ու ինքնա-սիրությունը, մարդկային լինել նրա նկատմամբ: Գույքային հարաբե-րությունների բնագավառում Գոշը, ըստ եւրիամ, սահմանում է անուսինների գույքային իրավահավասարությունը, մի բան, որը շատ հազվադեպ երևույթ էր միջնադարում:

Միսիքար Գոշը ունի նաև իր ուրույն քրեական ուսմունքը, որն ամենից առաջ աչքի է ընկնում մարդասիրական եւրիամք: Գոշին հայտնի է, որ մարդկային բնությունը մեկընդիշտ տրված ինչ-որ ան-փոփոխ բան չէ, այն ապրում է լինելիության և զարգացման անընդ-հատ պրոցես, որի հետևանքով համախ նարդը շեղվում է դեպի անիրավությունը և դառնում մեղսագործ: Ըստ Միսիքար Գոշի՝ մեղքը քրեական ինաստով ծագում է ոչ թե բնությունից կամ ինքնին, այլ երբ մարդը գիտակցարար ուտնահարում է օրենքը, «չի ըստ բնութեան ոչ է մեղք, այլ ըստ օրինաց դրութեան յայտնելոյ գի-տութիւն» (Մաս 2-րդ, հոդվ. ԺԹ): Ուրեմն, ըստ Գոշի՝ հանցագոր-ծուրիյունը օրենքով պաշտպանված որոշակի հասարակական հարա-բերությունների դեմ ուղղված ուտնագործություն է: Դեռ ավելին՝ Գոշը, ըստ եւրիամ, պաշտպանում է քրեական իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկը, չկա հանցանք, չկա պատիժ առանց օրենքի: «Առանց դատաստանի մի տուգաննեսցի» (Մաս 2-րդ, հոդվ. Ա):

Մարդկանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում Գոշը նախատեսում է երկու գլխավոր սկզբունք:

ա) Քրեական պատասխանատվության հիմքում պետք է ընկած լինի մեղքը՝ քրեական իմաստով: Դատաստանագիրքը ահմանել է մեղքի երեք ծև «կամավոր» (դիտավորություն), «ակամայ» (անզգուշություն) և «խառն», որը պարունակում է դիտավորության և անզգուշության տարրեր: Մեղքի ձևին և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանին համապատասխան՝ նշանակվում են տարրեր պատժատեսակներ: Անկախ մեղքի ձևից, հանցագործություն կատարած նարդը պետք է իր արարքի համար հաշիվ տար և արարքի հետևանքները գիտակցելու հոգեկան-մտավոր կարողություն ունենար, այսինքն՝ քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանցագործության սուբյեկտը պետք է մեղսունակ լիներ: Մեղսունակությունը կապված էր ինչպես որոշակի տարիքի հետ (ըստ Դատաստանագրքի՝ 15-ից բարձր տարիքը լիակատար մեղմությունն էր), այնպես էլ նարդու հոգեկան-ֆիզիկական դրության հետ: Այսպես, ի ծնե կամ հիվանդագին պատճառներով խանգարված գիտակցությունը, ըստ Դատաստանագրքի, քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք է (Սասն 1-ին, հոդվ. ԶԹ):

բ) Երկրորդ հիմնական սկզբունքը պատասխանատվության անհատականությունն է, այսինքն՝ նարդը ենթակա էր քրեական պատասխանատվության միայն սեփական արարքի համար: Այս դրույթը հստակորեն ամրագրված է Դատաստանագրքի ճնշելու հոգեկանությունը. «Մի մեռանիցին հարը ընդ որդոց, ել մի որդիք մեռանի-ցին ընդ հարանց, իւրաքանչիւր ոք ի մեղս իւրում մեօցի» (Սասն 2-րդ, հոդվ. ԶԴ):

Այստեղից կարելի է եզրակացնել, որ մարդկանց քրեական պատասխանատվության ենթարկելու և պատմելու հիմքում Դատաստանագրքում ընկած է սուբյեկտիվ մեղսայնացնան և անհատականության սկզբունքը: Դրա հակառակ, Դատաստանագրքին խորը է օրյեկտիվ մեղսայնացնան սկզբունքը, ըստ որի պատասխանատվության նախապայմանը հանդիսանում է պատճառված վնասը կամ հանցավոր հետևանքի սոսկ վաստոց:

Պատիճ նշանակելիս, բացի վերոհիշյալ հանգամանքներից, Դատաստանագիրքը ընդունում էր նաև հետևյալ պայմանները.

1) Պատիճը պետք է համապատասխանի կատարված արարքի վտանգավորության աստիճանին, «խև պատիճն ըստ վնասու համեմատ լիցի» (Սասն 2-րդ, հոդվ. ԶԻԶ):

2) Պատիճ նշանակելիս պետք է պարզել հանցագործի անձը, մեղքի ծևը, հանցագործության կատարման միջոցներն ու մեթոդները, շարժադրմերն ու առաջացած հետևանքները:

Պատժի նպատակը, ըստ Գոշի՝ ոչ միայն ֆիզիկական տանգանքների ենթարկելն էր, այլ նաև հանցագործին խրատելը և ուղղելը. «Բանտ լինել դատաւորին առ ի խրատել նոքաք զստահական» (նախ. գլ. Զ):

Գոշի Դատաստանագիրը, ժամանակաշրջանի մյուս իրավական հուշարձանների հետ համեմատած, աչքի է ընկնուն նաև ոչ այնքան դաժան պատիճներով: Հիմնական պատժատեսակներն էին՝ դրամական տուգանքը, մարմնական պատիճները, ազատազրկումը և ապաշխարանքը: Ինչ վերաբերում է մահապատժին, որն այնքան տարածված էր ավատադիրական ժամանակաշրջանում, որպես կանոն, Գոշը դեմ էր այդ պատժատեսակին, և Դատաստանագրքում այն նախատեսված է շատ բացարիկ դեպքերում: Ըստ Գոշի «մեր բազավորները» չեն իրանայել հավատացյալներին մահվան դատապարտել («չհաւատացեալ սպանանել»), այլ միայն խրատել, այսինքն՝ մարմնական պատժի ենթարկել: Դատաստանագիրը, որպես կանոն, մահապատժը փոխարինել է տուգանքով, երբեմն նաև՝ անդամահատումով, բանտարկությամբ, աքսորով և այլն, ընդունին, մերժելով մովսիսական «արյան փոխարեն արյուն» սկզբունքը:

Գոշի մարդասիրությունը, նրա առաջադիմական հայացքները առօվկել ցայտուն կերպով դրսերկել են Դատաստանագրքի այն նորմերուն, որոնք վերաբերում են դատարանին, դատարանակազմությանը և դատավարությանը:

Ըստ Դատաստանագրքի Դայաստանում պետք է գործեն երկու դատական համակարգեր, աշխարհիկ (պետական) և հոգևոր (Եկեղեցական), առաջինը՝ թագավորի կամ մեծ իշխանի գլխավորությամբ, իսկ երկրորդը՝ կաթողիկոսի կամ եպիսկոպոսի: Իսկ եթե չկա աշխարհիկ իշխանություն, ամբողջ դատական ֆունկցիան պետք է կենտրոնանա հոգևոր դատարանի ծեռքում: Յոգևոր դատարանը պետք է «ուղղի» հանցագործին հոգեպես, իսկ աշխարհիկը՝ մարմնապես, այնպես, ինչպես կրոնական գրքերը նպատակ ունեն մարդկանց հեռու պահել մեղքերից, և Դատաստանագիրը ջանում է «հատանել զշարս և չանիրաւս», որպեսզի մարդիկ միշյանց հետ վարվեն «սիրով և բարենտութեամբ»: Դատարանի նպատակը պետք է լինի արդարության բացահայտումը, մարդկանց միջից խռովությունը վերացնելը, նրանց միջև խաղաղություն հաստատելը: Եվ թեպետ բոլոր մարդկային գործերում ամենալավ վարքագիծը ողորմած լինելն է, սակայն դատական գործում պատշաճ է ծշմարտության հայտնաբերումը («ուղղորդն է պատշաճ»): Իսկ ինչպիսի դրական հատկանիշներ և բարեմասնություններ պետք է ունենա դատավորը: Այս հարցին Գոշը պատասխանել է «Նախադրության» Եև Զ գլուխներում: Ըստ նրա՝ դատավորը պետք է օժտված լինի և

տեսական գիտելիքներով, և գործնական աշխատանքի փորձ ունենա («հմուտ լինել, և քաջուսումն, և հանճարեղ»), որպեսզի անսխալ վարի դատական գործը: Դատավորը պետք է չափահաս լինի, ուշին, գիտուն, որպեսզի անտեղյակության հետևանքով սխալ որոշում չկայացնի: Դատական գործը Գոշը համեմատում է արվեստի գործերի հետ և նշում, որ եթե «փոքր» արվեստներուն չի կարող գործել նա, «որ ոչ է հասու», ապա այդ առավել ճիշտ է այնպիսի «մեծ» գործում, ինչպիսին է դատական գործի քննությունը, «որ Աստուծու վայել է»: Դատավորը պետք է անկաշառ լինի, որպեսզի համարձակ լինի դատական ատյանում և ուղիղ դատավճիռ կայացնի («զգիր դատաստանին ուղիղ հատցէ»), որպեսզի այն լսողների հավանությանն արժանանա («չի միտ լսողացն հաճնացի»): Դատավորը պետք է նաև օր ու գիշեր գրադիմի ինքնակրությամբ, յուրացնի բոլոր ազգերի իմաստուն մարդկանց խոսքերը, օրինակ վերցնի նրանցից: Նա անվերապահորեն պետք է բոլոր կողմերով («ամենայն իրօք») բարի ու առաջին լինի և ամենից ավելի համբերատար բնավորություն ունենա, չբարկանա, երեք նախանձուտ չլինի, «մանաւանդ ի ժամ դատաստանին», որպեսզի դատավորների մտքում թյուրիմացություն չառաջանա, և նրանք չկարծեն, թե դատավորի նախանձուության կամ բարկացկուության հետևանքով սխալ վճիռ է կայացվել: Դատավորները պետք է նաև ներողամիտ լինեն:

Ահա այսպիսի մեծ պատասխանատվություն է Գոշը դնում դատավորների առօք, որը մեր օրերում նաև նույնքան արդիական է հենցում, որքան խորը միջնադարում: Մխիթար Գոշը հանգամանորեն անդրադարձել է նաև դատավարության հարցերին: Նա դեմ է եղել դատավարության ինկվիզիցիոն ծեխն, որը ավատադիրական ժամանակաշրջանում նույնպես տարածված բնույթ էր կրում: Ըստ Գոշի՝ դատավարությունը պետք է ընթանա մրցակցական սկզբունքով: Եթե միջնադարյան դատավարությունում ընդիանրապես խոստովանությունը համարվում էր «ապացույցների թագուհի», ապա Գոշը դրան չի տվել որևէ առավելություն: ճիշտ է մի քանի անգամ նա հիշատակում է «խոստովանությունը», բայց այն համարում է ոչ թե «ապացույցների թագուհի», այլ լրացուցիչ մի կովան՝ դատական գործը լուծելու համար: Գոշը, որպես կանոն, դեմ էր նաև երդմանը, որպես ապացույցի տեսակ: Սակայն նա, բացառության կարգով, ստիպված է եղել ընդունել երդումը որպես ապացույց, միմիայն այն սահմանափակելու նպատակով, քանի որ մարդկանց մեջ երդվելը շատ տարածված է եղել: Գոշը թույլատրում է երդվելը, բայց «ոչ իրանան տալով», և ավելի հավաստի է համարում վկաների ցուց-

մունքը, քան կողմերի երդումը, քանի որ «բազում անգամ» խաբելու, սուտ երդվելու դեպքեր են լինում:

Վերջապես, նշենք, որ այս դեպքերում, երբ երդումը ընդունվում էր որպես ապացույց, երդվողը պետք է անպայման ապաշխառություն կրի, քանի որ նա «մեղք» էր գործում: Գոշը դեմ էր ոչ միայն երդմանը, այլև ընդհանրապես օրդալիաներին: Օրդալիան դատավարական քննության (փորձության) մի բարբարոսական մեթոդ էր, որով փորձում էին բացահայտել «ճշմարտությունը»: Օրդալիան արտահայտվում էր երդման, հաղորդություն ընդունելու, շիկացած երկար ծեռքն առնելու, սառը ջուրը մտնելու կամ մննանարտելու (անզեն կամ գենքով) միջոցով: Օրդալիայի ենթարկվածը «ապացուցում» էր իր իրավացիությունը, եթե նա մարմնական վնասվածք կամ պարտություն չէր կրում:

Գոշը ապացույցների մեջ ամենավստահելին և ամենաարժեքավորը համարում է վկաների ցուցմունքը, «Եւ հարկ է վկայինք լինել դատաստան» (Նախ. գլուխ է), այսինքն՝ դատավարությունը պետք է ընթանա վկաների ներկայությամբ: Դատարանը պետք է հենվի այն վկաների ցուցմունքների վրա, որոնք «ճշմարտախոս» են և չկաշառված: Նման ցուցմունքների հիման վրա ընդունված դատավճիռը արդարացի կլինի: Վկաների թիվը պետք է երկու կամ ավելին լինի և, միևնույն ժամանակ, չափահաս՝ 25 տարեկանից բարձր: Բայց կարելի է ընդունել նաև անչափահասի վկայությունը, եթե մյուս վկան կամ վկաները չափահաս են: Սակայն Գոշը դեմ էր նաև վկաների ցուցմունքը անվերապահորեն ընդունելուն, որանք ծևական գնահատման ենթարկելուն, ինչպես ընդունված էր խնդրո ժամանակաշրջանում: Գոշը, ընդհանուր առնամբ, դեմ՝ էր ծևական ապացույցներին և նշում էր, որ դատավորը պետք է «ճշգրտելով» հարցաքննի ու լի վկաների ցուցմունքները, որպեսզի լոկ ենթարդությունների հիման վրա դատավճիռ չկայացնի:

Դատական նիստը դրեբաց էր, իսկ դատավրությունը բանավոր (Նախ. գլուխ է): Դատավարության կողմերը, ըստ Դատաստանագրքի՝ օժտված էին հավասար իրավունքներով, այսինքն՝ դատարանի առջև նրանք հավասար էին: Սակայն, ավատատիրական հասարակարգում հիշյալ նորմը դժվար իրականացվեր, համենայնդեպս այն դեպքում, եթե կողմերից մեկը ավատատեր էր, իսկ մյուսը՝ ստորին դասի ներկայացուցիչ:

Ըստ Դատաստանագրքի՝ դատարանի որոշումները գրի էին առնվում և պահպանվում:

Դատաստանագրքը զգալիորեն նպաստեց այն նպատակների իրացործմանը, որի համար ստեղծվել էր: Սա հաստատվում է թեկուզե այն փաստով, որ Դատաստանագրքը իր ստեղծումից հետո

շուտով կյանք մտավ և գործադրվեց միջնադարյան Հայաստանի դատական աւուժական առաջնորդում:

РЕЗЮМЕ

Мхитар Гош - великий мыслитель-ученый, законодатель, писатель, педагог, общественный деятель, который жил общественными и политическими интересами своего времени откликаясь на них как первом, так и своей деятельностью.

Перу прославленного ученого принадлежат около десятка трудов, относящихся к ранним областям средневековой книжности. Особенную ценность среди его трудов представляют «Судебник» и «Причча».

«Судебник» создал в 1184 году, но автор не считал его завершенным, поскольку, по его мнению, «Судебник» никогда не может быть совершенным и завершенным, всегда подлежит изменениям, дополнениям, улучшению соответственно требованиям времени, среды и обстоятельств.

Мхитар Гош был сторонником естественного права, которые он рассматривал как выражение в человеке божественного разума.

Исходя из этой теории, он считая, что по своей природе люди свободны и равны. В отличие от других средневековых мыслителей, которые искали причину людского неравенства в утрате правдивости, эгоизме и алчности богатых и т.д. Гош объяснил ее более обосновенно и убедительно-это отсутствие у бедных собственной земли и воды. Устойчивость государства он тесно связывал со справедливыми законами и настаивал на том, что соблюдать их должны все члены общества, в числе и всемогущий царь.

Мхитар Гош был поборником мира, выступал за идею конфессиональным толерантности и межетнического согласия.

В целом, политико-правовые воззрения Мхитар Гоша были оригинальными и прогрессивными не только для своего времени, но и для последующих эпох.